Վեսպիանոս սկսաւ յամի տեառն ԿԸ։ Ինքնակալեաց ամս Թ. և ամիս Ժ։ Սա էր այր բարի։ Սա ՚ի զօրականութեան իւրում բազում պատերազմունս մղեաց և յամենայնի յաղթող գտաւ, և զանազան գաւառս հնազանդեցոյց Հռոմայեցւոց։ Սա առաքեցաւ ի Ներոնէ ՚ի վերայ Հրէաստանի և Գաղեղիոյ առ ՚ի հնազանդեցուցանել զապստամբեալ Հրեայսն, որք հակառակեցան հրամանաց Կայսերական հարկացն։ Արդ մինչ էրն ՚ի Գաղեղիան, պաշարեալ զօրօք զԵրուսաղէմ, անդ ՚ի զօրացն թագաւորի պսակն եղև եդեալ՝ Ինքնակալ կոչեալ։ Սա կալաւ զՅովսէփոս հրեայ և պահեաց ՚ի կապանս. և նա մարգարէացաւ թէ՝ թագաւորելոց ես Վեսպիանէ՛։ Եւ իբրև թագաւորեաց, եկն ՚ի Հռոմ. և զՅովսէփոս արձակեաց և պահէր պատուով։ Եւ փորացաւութեամբ մեռաւ ՚ի վերայ ոտիցն ասելով, ոչ է պարտ արքայի ընկողմանել։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան